

ԱՐԾՎԻ ԲԱԽԶԻՆՅԱՆ, պ.գ.թ.  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող,  
էլ.հասցե՝ [artsvi1971@mail.ru](mailto:artsvi1971@mail.ru)  
DOI: 10.56925/2953-7894-2022.5-40

## ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

**Հիմնաբառեր՝** Հոքուսայ, Վարդգես Սուրենյանց, Ասլամազյան քույրեր, Արա Հայթայան, Տարոն Սիմոնյան, հայ-ճապոնական ցուցահանդեսներ:

Թեև կերպարվեստի բնագավառում Հայաստանի և Ճապոնիայի միջև առկա առնչություններին մենք անդրադարձել ենք հայ-ճապոնական պատմամշակութային կապերին նվիրված մեր աշխատության մեջ<sup>1</sup>, սակայն ավելորդ չենք համարում սույն համատեքստում կրկին անդրադառնալ դրանց՝ կատարելով նաև որոշ լրացումներ:

Մեզնից բացի, հարցին անդրադարձել է ռուս լրագրող Վալերիա Օլյունինան իր երկու հոդվածում:<sup>2</sup>

Սույն առարկան ներառում է մի քանի ենթաթեմա՝

---

<sup>1</sup> Բախչինյան Ա., *Հայ-ճապոնական պատմական և մշակութային առնչությունները*, Երևան, 2018, էջ 95-102:

<sup>2</sup> Олюнина В., *Фудзияма и Арарат: в космических и художественных зеркалах*, <https://www.armmuseum.ru/news-blog/2018/5/10/--2>; Валерия Олюнина, *Бусидо и Кодекс фиданна: о самураях, Че, Гаянэ и Монте Мелконяне*, <https://www.armmuseum.ru/news-blog/2017/11/23/--4>

- ա. ճապոնական թեմաներ և մոտիվներ հայ կերպարվեստում,
- բ. ճապոնական կերպարվեստի գործեր Հայաստանում
- գ. հայ արվեստի ցուցահանդեսներ Ճապոնիայում և ճապոնական արվեստի ցուցահանդեսներ Հայաստանում:

Կերպարվեստի բնագավառում հայ-ճապոնական առնչությունների առաջին դրսևորումը պայմանականորեն կարելի է համարել ճապոնացի ականավոր նկարիչ Կացուշիքա Հոքուսայի (1760–1849) «Կանագավայի մեծ ալիքը» հանրահայտ փորագրանկարը, ստեղծված 1820–1831 թթ. ժամանակահատվածում: Ծովային տեսարան պատկերող նկարում, փրփրադեզ ալիքների մեջ կարելի է նկատել Արարատ լեռան ուրվագիծը: Այս նմանությանը մեզանում առաջինն անդրադարձել է արվեստագետ Գրիգոր Խաչատրյանը՝ 2010 թ. նախաձեռնած «Պատահականությունների պլանավորման ազգային կենտրոն» նախագծում ընդգրկելով «Կացուշիկա Հոքուսայ» ֆոտոկոլաժը, որտեղ մեկտեղված են «Կանագավայի մեծ ալիքը» և Արարատ լեռան լուսանկարը:<sup>3</sup>

Սույն նմանությանն անդրադարձել է նաև Աննա Վարդանյանը:<sup>4</sup> Ծանոթ չլինելով Գրիգոր Խաչատրյանի ֆոտոկոլաժին՝ նա նույնպես Հոքուսայի աշխատանքում տեսել է Արարատ լեռը: *«Թե՛ իմ հայ լինելը, թե՛ ճապոնական մշակույթի երկրպագու լինելը դրդում էին ինձ տեսնել անտեսանելին»*, –

<sup>3</sup> Հայացք. Հայաստանի ժամանակակից արվեստ: View: Armenian Contemporary Art, Երևան, 2011, էջ 60:

<sup>4</sup> Վարդանյան Ա., *Արարատը ճապոնական գեղանկարո՞ւն*, «Ազգ», Երևան, 08.06.2018:

գրել է Վարդանյանը և պրպտումներ կատարելով՝ պարզել, որ ոչ միայն իր «հայկական» աչքերն են տեսել դա: Նա նշել է, որ 1959 թ. ամերիկացի հայտնի բանաստեղծ Դոնալդ Ֆինքելը (1929–2008) Հոբուսայի մեծ ալիքի մասին իր բանաստեղծության մեջ գրել է. *«Սակայն անմեղ դիտորդը, նա հազիվ «Քայլում է անկյունի շուրջը՝ չմտածելով ոչնչի մասին»..... Նա օձերով լի ծովում ձկնորսությամբ է զբաղվում, վարում է իր նավը կուրորեն ալիքից ալիք՝ դեպի Արարատ»:*<sup>5</sup> Իսկ Ֆինքելի մասին հոգվածի հեղինակ Սթիվըն Մարթինը մասնավորապես նշել է. *«Սակայն արվեստի գործի համար նկարիչը, որի աշխատանքներում ընդգրկված են նույն լեռան երեսունվեց տեսարանները, կարծես թե ևս մեկ տեսարան պիտի ընդգրկեր, նույնիսկ եթե այն լիներ արտաքին աշխարհից և Արարատ սարի գագաթից»:*<sup>6</sup>

Աննա Վարդանյանի ենթադրությամբ՝ *«Ինչպես ասում են ճապոնացիները՝ ցունամիները կգան-կանցնեն, իսկ Ֆուջին միշտ կմնա: Ո՞վ գիտի, միգուցե ցունամին և համաշխարհային մեծ ջրհեղեղն է պատկերել Հոբուսայն իր այդ նկարում: Իսկ որտե՞ղ կարող էր նկարիչը տեսած լինել Արարատի պատկերը աշխարհից դարեր շարունակ ինքնամեկուսացած Ճապոնիայում: Այս հարցերի վրա լույս կարող են սփռել պրպտումները ճապոնական արխիվներում»:*<sup>7</sup>

Ավելացնենք, որ Հոբուսայի անունը, որքանով կարողացել ենք պարզել, հայ մամուլում առաջին անգամ հրատարակվել է

---

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում:

1963 թ., Փարիզի «Անդաստան» հանդեսում<sup>8</sup>, նրա փարիզյան ցուցահանդեսի առթիվ. տարիներ անց այդ լուրը գրողը նկարչի մասին մեծ հոգվածով հանդես է եկել Բեյրութի «Կամար» հանդեսում:<sup>9</sup>

Այս առաջին առնչությունը համարելով պայմանական՝ նշենք, որ կերպարվեստի ասպարեզում առկա կապերից առաջինը վերաբերում է հայ գեղանկարչության դասական Վարդգես Սուրենյանցին (1860–1921), որը 1900 թ. ստեղծել է «Գեյշա. Ճապոնուհին» կտավը (պահվում է Հայաստանի Ազգային պատկերասրահում):<sup>10</sup> Հայ կերպարվեստում ճապոնուհու մեկեն հանդես գալը պայմանավորվում էր 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Եվրոպայում և Ռուսական կայսրությունում ճապոնական մշակույթը բացահայտելու միտումներով, որն ուժգնացել է հատկապես 1905 թ. ռուս-ճապոնական պատերազմից հետո: Դրա արձագանքները տեսնում ենք նաև նույն ժամանակաշրջանի հայ մամուլում. օրինակ, Թիֆլիսի «Խաթաբալա» երգիծաթերթում տեղ է գտել «Հեյշան (sic) պարում է» նկարը:<sup>11</sup> Ըստ արվեստաբան Շուշանիկ Զոհրաբյանի՝ Սուրենյանցը ճապոնական արվեստով կարող էր հրապուր-

---

<sup>8</sup> Յ. Թ. [Յարութին Թորոսեան], *Ցուցահանդեսներ*, «Անդաստան», Փարիզ, թ. 14, 1963, էջ 141:

<sup>9</sup> Թորոսեան Յարութին, *60-ական թուականներուն՝ Հոքիսայի նուիրուած մեծ ցուցահանդէսը Փարիզի Ազգային գրադարանին մէջ*, «Կամար», թ. 13, 2011, էջ 95-96:

<sup>10</sup> Այս ստեղծագործության մասնագիտական վերլուծությունը տե՛ս Զոհրաբյան Շուշանիկ, *Սուրենյանցի «Ճապոնուհի. Հեյշա (sic)» կտավը ռուսական և եվրոպական «ճապոնիզմի» համատեքստում*, «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջան (2-3 դեկտեմբերի, 2010 թ.)», Նստաշրջանի նյութեր», Երևան, 2011, էջ 118-130:

<sup>11</sup> «Խաթաբալա», Թիֆլիս, 19.12.1909:

ված լինել 1896-ի դեկտեմբերին Պետերբուրգում բացված ճապոնական արվեստի ցուցահանդեսի շնորհիվ: Արվեստաբանի եզրահանգմամբ՝ Սուրենյանցը ճապոնական արվեստում «*թերևս տեսավ ստեղծագործական ինքնաարտահայտման ազատության նոր ուղի, իրականության կերպարանափոխման նոր մեթոդներ, դրանով հանդերձ «օտար» մշակույթը ոչ միայն ներառվեց այժմեականության արդիական հարցերի շրջանակում, այլ դառնալով որոշակի չափով «յուրային», մասնակցություն ունեցավ դարաշրջանի նոր հայացքների ու արժեքների կազմավորման մեջ, որի դեմքը պայմանավորում էր մոդեռն ոճը: Նկարչի նպատակը ոչ միայն ոճավորումը և ճապոնական մշակույթի գաղափարների, աշխարհայացքի հիմնական, էական սկզբունքների, մտահղացումների կիրառումն էր, այլ նրա միասնական, խորքային «ընդհանուր հայտարարի» դուրսբերումը, հիմքեր արդյունավետ երկխոսության և մշակույթների փոխադարձ լուսաբանման համար»:<sup>12</sup>*

Այս նույն համատեքստում պիտի դիտարկել նաև Մարտիրոս Սարյանի ուշադրությունը ճապոնական արվեստի հանդեպ: 1970 թ. իր արվեստանոց այցելած ճապոնացիներին Վարպետն ասել է հետևյալը. «*Ճապոնացիք հրաշալի արվեստ են ստեղծել: Ես շատ էի ուզում ճապոնիա գալ և միշտ հետաձգում էի.... Բայց ես միշտ սիրել եմ ճապոնական արվեստը: Աշխարհագրական դիրքով դուք առանձին եք, կղզում և ունեք ձեր անհատական բնությունը: Չեք ենթարկվել այլ ազդեցությունների և պահպանել եք ձեր մաքրությունը: Դուք ստեղծել եք ձեր բնության արվեստը: Պիտի գալի 1914 թ., բայց խանգար-*

<sup>12</sup> Զոհրաբյան Շ., Սուրենյանցի «Ճապոնուհի. Հեյշա (sic)» կտավը, էջ 130:

*վեց: Երազել եմ տեսնել: Դա շատ մեծ ազգային արվեստ է: Դուք արդարացրել եք Աստծո վստահությունը»:*<sup>13</sup> Հետագայում, 1976 թ. Մոսկվայի «Պրոգրես» հրատարակչությունը լույս է ընծայել Մարտիրոս Սարյանի «Գրառումներ իմ կյանքից» հուշագրության ճապոներեն թարգմանությունը՝ կատարված ռուսերենից:

Խորհրդային Հայաստանը, սկսած հիմնադրման առաջին տասնամյակից, պատահական կապեր է ունեցել Ճապոնիայի մշակույթի հետ: Տակավին 1929 թ. Երևանում բացվել է ճապոնական մանկական գրքերի և ճապոնիայի երեխաների նկարչական ստեղծագործությունների ցուցահանդես, ճապոնիայից ստացվել է 1000 գիրք և 750 նկար, որոնցից ցուցադրման համար ընտրվել են լավագույնները:<sup>14</sup> Երբեմն հայ նկարիչները ստեղծագործել են ճապոնական մոտիվներով. նշենք 1930 թ. Սարգիս Սաֆարյանի ստեղծած ճապոնական «Սումիկո» ֆիլմի որմագործ, որտեղ հայերեն և ռուսերեն վերնագրերը գրված են ճապոնական ոճով<sup>15</sup>, թիֆլիսաբնակ հայ նկարչուհի Անաստասյա Դանդուրովայի (1899–1960)՝ Հայաստանի ազգային պատկերասրահում պահվող ճապոնական ոճով գունանկարը:

Հայաստանի Ազգային պատկերասրահի Հեռավոր Արևելքի բաժնում ցուցադրվում են նաև ճապոնական արվեստի նմուշներ: Դեռևս 1924 թ. նորաստեղծ թանգարանում եղել են

---

<sup>13</sup> Խաչատրյան Շ., *Բնության ստեղծագործությունը*, «Ազգ», 26.02.2005:

<sup>14</sup> *Ճապոնական մանկական գրքի և նկարների ցուցահանդես*, «Խորհրդային Հայաստան», Երևան, 03.11.1929:

<sup>15</sup> Գալստյան Վ., *Մոռացված արվեստ. հայկական կինոագագիր. 1926–1989*, Երևան, 2006, էջ 40:

չինական և ճապոնական ասեղնագործության նմուշներ:<sup>16</sup> Դրանցից բացի հավաքածուում կան ճենապակե և հախճապակե առարկաներ, փղոսկրյա մանրաքանդակներ, փայտափորագրություններ, այդ թվում՝ 19-րդ դարի ուկիյո-է գունավոր փայտափորագրության ամենահայտնի վարպետներից մեկի՝ Ուտագավա Կունիսադայի (1786–1864) 91 ստեղծագործությունները, որոնք 1994 թ. Պատկերասրահը նվեր է ստացել «Ուտագավա-հա» հիմնադրամից:<sup>17</sup> 2008 թ. դեկտեմբերին Հայաստանի ազգային պատկերասրահում բացվել է 200 տարվա վաղեմություն ունեցող 250 ճապոնական փորագրանկարների ցուցահանդեսը. այդ առթիվ հրատարակվել է կատալոգ:<sup>18</sup> Հատկանշական է նաև, որ Երևանի Մատենադարանի ցուցասրահում այլալեզու ձեռագրերի մեջ ցուցադրվում է նաև մի ճապոներեն ձեռագիր պատկերագիրք («Մանգա» (Պատկերուսույց), գրված 1812 թ.:

1953 թ. Հայաստանում հինգ օրով հյուրընկալվել է ճապոնացի կանանց պատվիրակությունը, որոնց մեջ է եղել նաև ճապոնացի հայտնի նկարչուհի և գրող **Տոշիկո Ակամացուն** (հայտնի նաև որպես Տոշիկո Մարուկի, 1912–2000թթ.): Վերջինս «Խորհրդային կին» բազմալեզու հանդեսի 1953 թ. նոյեմբերյան համարում հրատարակել է ԽՍՀՄ կատարած իր ուղևորությանը նվիրված «Այնքա՛ն գեղեցկություն» հոդվածը,

---

<sup>16</sup> Ապրեսեսանց Ա., *Չորս ամիս Խորհրդային Հայաստանում*, «Պայքար», Ուօթթթաուն, 30.06.1924:

<sup>17</sup> Հարությունյան Հ., *Ճապոնական արվեստի նմուշները Հայաստանում*, Հայաստան - Ճապոնիա. Քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ, Երևան, 2005, էջ 124-135:

<sup>18</sup> *Ճապոնական Ուտագավա դպրոցի Ուկիյո-է փորագրությունը*, Երևան, 2008:

որտեղ գրել է նաև Հայաստանի մասին: Հետագայում Մարուկին հոդված է հրատարակել նկարչուհի Մարիամ Ասլամազյանի մասին «Ճապոնիայի ձայն» թերթում (1966 թ., մայիսի 10):

1960-ականների սկզբից Ճապոնիա են այցելել մի քանի հայ նկարիչներ: Ճարտարապետ և նկարիչ **Արծվին Գրիգորյանը** (1935–2012 թթ.) Ճապոնիա կատարած այցից հետո 1963 թ. հրատարակել է «Ֆուձիյամայից մինչև Արարատ: Պատկերազարդ գիտահանրամատչելի ակնարկներ» գիրքը՝ սեփական պատկերազարդումներով: Ճապոնական նկարաշար է ստեղծել նաև մեկ այլ Ճարտարապետ-նկարիչ՝ **Կառլեն Անանյանը** (1924–2011 թթ.):

1963 թ. Ճապոնիայում ստեղծագործական այցով եղել են նկարչուհի քույրեր **Մարիամ** (1907–2006 թթ.) և **Երանուհի** (1909–1998 թթ.) **Ասլամազյանները**: Մարիամը ստեղծել է ճապոնական նկարաշար: Երանուհին 1965 թ. Մոսկվայում ստեղծել է «Երգչուհի Կիոկո սանի դիմանկարը»: Վստահ ենք, որ պատկերվածը երգչուհի Կիոկո Օդան է, որը Ճապոնիայում ծանոթացել է Արամ Խաչատրյանի հետ, նրա հրավերով ուսանել Մոսկվայի կոնսերվատորիայում, 1965 թ. այցելել է Հայաստան և իր երկացանկում ընդգրկել նաև հայկական երգեր:

Ճապոնիա այցելած Հայաստանի վաստակավոր նկարչուհի **Քնարիկ Վարդանյանը** (1914–1996 թթ.) ևս հանդես է եկել փոքրիկ ակնարկով և ճապոնական ձեպանկարներով:<sup>19</sup> Վարդանյանը նաև հայ մամուլում ներկայացրել է 38 տարի Ճապո-

---

<sup>19</sup> Վարդանյան Ք., *Ճապոնական ձեպանկար*, «Գարուն», Երևան, 1979, թ. 12, էջ 68-69:



նիայում բնակված ռուս նկարչուհի Վարվառա Բուբնովայի «Ճապոնական գեղանկարչություն» հոդվածը:<sup>20</sup>

Խորհրդային Հայաստանի կերպարվեստագետներն անդրադարձել են 20-րդ դարի մեծագույն ճապոնական ողբերգությանը՝ Հիրոշիմայի և Նագասակիի վրա ամերիկացիների կողմից ատոմային ռումբեր նետելու իրողությանը: Արձանագործ **Արա Սարգսյանը** (1902–1969 թթ.) 1957 և 1961 թթ. ստեղծել է «Հիրոշիմա» քանդակները, որոնցից առաջինի վերատպությունը 1958 թ. հրատարակվել է ճապոնացի էսպերանտիստների «Ռևյու օրիենտալ» ամսագրի փետրվարյան համարի շապիկին: Նկարիչ-պլակատիստ **Ալբերտ Ասյանը** (1922–2003 թթ.) 1958 թ. ստեղծել է «Ո՛չ» պլակատը՝ ընդդեմ ատոմային ռումբի:

Հայ ականավոր նկարչուհի **Գայանե Խաչատրյանի** (1942–2009 թթ.) գեղանկարչության վրա ակնհայտ է ճապոնական արվեստի, մանավանդ Կիտագավա Ուտամարոյի ազդեցությունը: 1976 թ. նա ստեղծել է «Նվիրումով մեծերից ամենամեծ Կիտագավա Ուտամարոյին» գործը:

Հայաստանի անկախությունից հետո ճապոնիայի հետ հարաբերություններն է՛լ ավելի են սերտացել: 1997 թ. Հայաստանի Մանկական պատկերասրահի և ճապոնական «Սոկա Գակկաի» միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Աշխարհի երեխաների ստեղծագործությունները» վերնագրով ցուցահանդես, որին մասնակցել են 160 երկրների և շրջանների մանուկների 400 գործեր: Այդ առթիվ լույս է տեսել «Ֆուջիյամայից մինչև Արարատ» (Մանկական

---

<sup>20</sup> «Գարուն», 1977, թ. 12, էջ 87-90:

միջազգային արվեստ)» արժումը (Երևան, 1997 թ.): 2001 թ. Տոկիոյում կայացած «Երեք հարավ-կովկասյան հանրապետություն» ցուցահանդեսին իր ոսկերչական աշխատանքներով ներկայացել է երևանցի վարպետ **Սերգեյ Սահակյանը**: Նրա աշխատանքները բարձր է գնահատել ցուցահանդեսին այցելած Ճապոնիայի վարչապետ Հաշիմոտոն: Մի քանի անգամ Ճապոնիայում կայացած ցուցահանդեսների և փենալենների է մասնակցել նկարիչ **Կարեն Պետրոսյանը**:

Ճապոնիան, նրա բնությունը և մշակույթը շարունակում են ներշնչել հայ արվեստագետներին: Ճապոնական կերպարվեստը և պոեզիան որոշակի ազդեցություն են ունեցել հայ նկարիչ և բանաստեղծ **Արա Բադդասարյանի** (1940–2016 թթ.) ստեղծագործությունների վրա: Նա պատկերազարդել է Ջյունիչիրո Տանիջակիի պատմվածքները (2003 թ.): Կոբո Աբեի «Ավագուտների կինը» նշանավոր վեպի ներշնչանքով նկարաշար է ստեղծել ԱՄՆ-ում բնակվող հայ նկարիչ **Մարտիրոս Աղայանը**: 2012–2013 թթ. **Արամազդ Պետրոսյանը** ստեղծել է ճապոնուհիներ պատկերող «Երեք գրացիա» գեղանկարը: 2016 թ. Տոկիոյում հայ մշակույթի օրերի շրջանակներում կայացել է երևանցի նկարչուհի **Արև Պետրոսյանի** ցուցահանդեսը: Ուշագրավ է, որ թեև այն չի եղել ցուցահանդես-վաճառք, ճապոնացիները գնել են հայկական մանրանկարչության մոտիվներով կատարված նրա բոլոր աշխատանքները: Արև Պետրոսյանը, ճապոնիայով ներշնչված, ստեղծել է «Լոռություն» եռանկարը: Այնտեղ չկան ճապոնական մոտիվներ, սակայն ստեղծագործությունն իր մինիմալիզմով և տրամադրությամբ հարազատ է ճապոնական ոգուն:

Նույն 2016 թ. Տոկիոյում երկու անգամ անհատական ցուցահանդես է ունեցել նաև մեկ այլ հայաստանցի նկարչուհի՝ **Արևիկ Մկրտչյանը**:

Ճապոնիայով մասնավորապես ներշնչված է գեղանկարիչ և լուսանկարիչ **Տարոն Սիմոնյանը**, որը երկու անգամ այցելել է Ճապոնիա, 2010 թ. հանդես է եկել «Զբոսանք Պետերբուրգում» ցուցահանդեսով: Ստեղծել է «Ճապոնիայի գույները» լուսանկարչական շարքը (2006 թ.) և Ճապոնական թեմայով մի շարք գեղանկարներ: Ինչպես խոստովանել է Սիմոնյանը. *«Ճապոնիան որոշ առումով հղկեց ինձ. այն անուղղակիորեն պարտադրում է կանոններ, որոնք դժվար էին, սակայն՝ ընդունելի ու շատ հետաքրքրական: Երբ մարդ տեսնում է նորություն և հասկանում է, որ դա իր համար ճիշտ է, լավ է և առողջարար, սկսում է միանգամից փոխակերպվել: Ճապոնիայից մենք շատ բան ունենք վերցնելու, առաջին հերթին՝ սերը և նրբազգացությունը բնության հանդեպ»*:<sup>21</sup>

Հատկապես աշխույժ են եղել կապերը ցուցահանդեսների կազմակերպման առումով: 2006 թ. օգոստոսին Հայաստանի ազգային պատկերասրահում Պետերբուրգի Ճապոնական արվեստի պատկերասրահի համագործակցությամբ բացվել է «Արարատից Ֆուջիյամա. Ճապոնական ժամանակակից արվեստ» ցուցահանդեսը (կուրատորներ՝ Անդրեյ և Իրինա Միխայլովներ): Ներկայացվել են Ճապոնացի 13 արվեստագետների (Էնրյու Կանո, Մայկո Մայեդա, Տակուջի Շիմուրա,

---

<sup>21</sup> Ճապոնիայի հետ ունեցած առնչությունների մասին մանրամասն տե՛ս Արծվի Բախչինյան, *Էկզոտիկա ըստ Տարոն Սիմոնյանի*, «Ազգ», 13.01.2017:

Մամորու Օկունո և այլք՝ գեղանկարներ, քանդակներ, լուսանկարներ և ինստալացիա:<sup>22</sup>

Ճապոնիայի արվեստագետների հետ արդյունավետ կերպով համագործակցում է երևանցի գեղանկարիչ, համադրող **Արա Հայթայանը**: 2007 թ. նրա ջանքերով Երևանի Նորարար փորձառական արվեստի կենտրոնում (ՆՓԱԿ) կազմակերպվել է լուսանկարիչ Տակուջի Շիմուրայի «Ենթագիտակցական դիզայն» ցուցահանդեսը (նաև պատկերագրքի տեքստի հեղինակն է): 2008 թ. Տոկիոյի «Գինձա իժոմե» պատկերասրահում Հայթայանի ցուցահանդեսի ընթացքում կազմվել է հայ-ճապոնական մշակութային համագործակցության ծրագրի նախագիծ, որին հետևել է 2009 թ. հունիսին ՆՓԱԿ-ում կայացած հայ և ճապոնական կերպարվեստի ցուցահանդեսը՝ «Տարանցիկ վարկածներ» խորագրով (կազմակերպիչներ՝ Արա Հայթայան և Մակի Միկիկո): Ճապոնական կողմից ցուցահանդեսին մասնակցել են **Իջամուի Դաիգուն, Հիդեյուկի Ուսուկին, Փիրեր Սմիրը, Կաձուո Արիգան, Տակուջի Շիմուրան, Յոկո Միկամին**: Այդ կապակցությամբ հայ մամուլում նշվել է. *«Հետաքրքրական է, որ չնայած այս երկու ժողովուրդների՝ ըստ էության (պատմական ընթացքների), զարգացումների, ավանդույթի, մշակութային և աշխարհագրական միջավայրերի տարբերություններին, ՆՓԱԿ-յան հայ և ճապոնական արվեստային ընդհանուր միջավայրն ընկալվում էր բավականին համարժեքորեն: Համենայն դեպս, պատկերի, գույնի դրսևորումների այս դաշտը խիստ տարբեր իրողությունների զգացողու-*

---

<sup>22</sup> Բադալյան Մ., *Արևելքի էկզոտիկան. ճապոնական ժամանակակից արվեստը Ազգային պատկերասրահում*, «Ազգ», 06.09.2006:

*թյուններ չառաջացրեց: Եթե անունները չլինեին, կարծես ոչինչ չէր փոխվի»:<sup>23</sup>*

Հայթայանը նաև 2011 թ. Երևան քաղաքի պատմության թանգարանում կազմակերպել է վերոհիշյալ Տակուջի Շիմուրայի «Փաստի գեղագիտության երևանյան հետազոծը» ցուցահանդեսը: Հայթայանը և Մակի Միկիկոն եղել է նաև 2012 թ. հուլիսին Երևանի Ռուսական արվեստի թանգարանում և Գյումրիի «Գալերի 25» ցուցասրահում, 2014 թ. Երևանի «Hi Art Online» պատկերասրահում կայացած «Հայ և ճապոնական արդի արվեստ» ցուցահանդեսների (որին մասնակցել է 30 արվեստագետ) համադրողը և պատկերագրքերի տեքստի հեղինակը: 2012 թ. Յոկոհամայում դարձյալ Հայթայանի ջանքերով կազմակերպվեց հայ (12) և ճապոնացի արվեստագետների ցուցահանդես (համակարգող՝ Վարդիթեր Հարությունյան): 2013 թ. Տոկիոյի «Գինձա իճոմե» ցուցասրահում կայացել է Արա Հայթայանի երկրորդ անհատական ցուցահանդեսը Ճապոնիայում՝ «Կորսված բնության այլաբանություն» վերնագրով: Նա նաև 2015 թ. Երևանի Ժողովրդական արվեստի թանգարանում և Երևան քաղաքի պատմության թանգարանում ՀՀ և Ճապոնիայի միջև դիվանագիտական հարաբերությունների 20-ամյակին նվիրված «Հայ-ճապոնական արդի արվեստ» ցուցահանդեսի հայկական մասի համադրողն էր:

Արդեն հիշված ֆրանսաբնակ ճապոնացի լուսանկարիչ Տակուջի Շիմուրայի՝ 2007 թ. Երևանում արված լուսանկարները ներկայացրել են հին ու նոր քաղաքի կառույցները: Նրա

---

<sup>23</sup> Նույնի, *Ճապոնական և հայկական արդի արվեստի խաչուղիներ* ՆՓԱԿ-ում, «Ազգ», 06.06.2009:

երևանյան լուսանկարաշարը՝ «Ecoumene» խորագրով, որ արժարժում է նոր քաղաքի կառուցման դրաման, Փարիզում կայացած լուսանկարչական ցուցահանդեսում համարվել է լավագույնը, արժանացել Լյուսիեն և Հուլիի շերվենների մրցանակին: Ցուցահանդեսի առիթով տպագրված Շիմուրայի մրցանակային աշխատանքների կատալոգում ծանոթ և անծանոթ երևանյան պատկերներն են, որտեղ հեղինակն իր պատկերացումներն է ներկայացնում կառուցման և փլուզման նույնացման փիլիսոփայության վերաբերյալ, որի գաղափարը մարմնավորվել է Երևանում:<sup>24</sup> 2009 թ. Հայ Բարեգործական Ընդհանուր Միության և Մարսելի «Սահակ-Մեսրոպ» մշակութային կենտրոնի աջակցությամբ կենտրոնի սրահում տեղի է ունեցել Շիմուրայի՝ Հայաստանի Ֆիդետովո գյուղի մոլոկան բնակչության մասին պատմող 40 լուսանկարչական աշխատանքների ցուցադրությունը:

2010 թ. Հայաստանում շրջել է լուսանկարիչ **Հայատո Իմանիշին**:<sup>25</sup> 2015 թ. Երևանում բացվել է **Կունիտո Նազանկայի** «Խաչքար. կակու-հոն պատկերագրում» ցուցահանդեսը, որի ժամանակ ցուցադրվել են Նորատուսի և Նորավանքի խաչքարերից ճապոնական դրոշմատպման եղանակով պատճենված նկարներ:

2010 թ. Ակիրա Կուրոսավայի երկու կինոնկարի որմագղ է ստեղծել **Կամո Նիգարյանը** (1954–2011 թթ.): Մնալով իր

---

<sup>24</sup> Բաղայան Մ., *Հայ-ճապոնական մշակութային երկխոսություններ*, «Ազգ», Երևան, 28.04.2009; Բաղայան Մ., *Թակուջի (sic) Շիմուրայի երևանյան ժամանակագրությունը*, «Ազգ», Երևան, 19.10.2010:

<sup>25</sup> Սիմոնյան Ա., *Ճապոնացու ֆոտոլիցիլը ֆիքսել է հայերի աղոթքը. Հայատո Իմանիշին Հայաստանը դուր է եկել*, «Առավոտ», Երևան, 22.06.2010:

ճանաչելի ոճին հավատարիմ՝ Նիգարյանին հաջողվել է ճապոնական դիմակների, հիերոգլիֆների և այլ ատրիբուտների շնորհիվ ստեղծել ճապոնացի ականավոր կինոբեմադրիչի աշխարհը պատկերող տպավորիչ աշխատանքներ:

2017 թ. հոկտեմբերի 13-ին Գյումրիի «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի Պատկերասրահում» տեղի է ունեցել հայ-ճապոնական ժամանակակից արվեստի ցուցահանդեսը՝ նվիրված հայ-ճապոնական դիվանագիտական հարաբերությունների 25-ամյակին:

Առնվազն ութ անգամ Հայաստանում ճապոնիայի դեսպանատան և Երևանի «Հիկարի» ճապոնական գիտամշակութային կենտրոնի նախաձեռնությամբ Հայաստան է եկել ճապոնացի նկարչուհի **Միդորի Յամադան** և վարել ճապոնական սումի-է գեղանկարչության (թանաքով նկարչություն) վարպետության դասեր բոլոր ցանկացողների համար:

Կերպարվեստի բնագավառում հայ-ճապոնական կապերի վերջին արտահայտությունը կարելի է համարել հետևյալ փաստը: Այս տարվա ապրիլի 3-ին Դիլիջանի Միջազգային դպրոցի ճապոնուհի աշակերտ **Միսակի Սոտոհաշին** իրենց դպրոցում կազմակերպված ցուցահանդեսում ներկայացրել էր նկարներ, որոնցից մեկը, իր ասելով, ներշնչված է վերոհիշյալ նկարչուհի Արև Պետրոսյանից:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ մեկ դարից ավելի է, ինչ ճապոնիան, նրա մշակույթն ու մարդիկ ներշնչում են հայ արվեստագետներին, որոնք ճապոնական մոտիվներն արտահայտել են ամենատարբեր ձևերով (գեղանկար, քանդակ, որմագր): Ի սկզբանե և մինչ օրս ճապոնական թեման հայ արվեստագետի համար եղել և մնում է տարաշխարհիկության

սահմաններում: Հայ և ճապոնացի արվեստագետների փոխ-  
ճանաչումը շարունակվում է ժամանակ առ ժամանակ կազմա-  
կերպվող ցուցահանդեսներով: Այնուամենայնիվ, առարկայա-  
կան պատճառներով, ճապոնական արվեստը Հայաստանում  
շատ ավելի է ներկայացված, քան հայ արվեստը Ճապոնիա-  
յում, մի բաց, որը ցանկալի է լրացնել, քանի որ ի բնե գեղագետ  
ճապոնացուն վստահաբար սրտամոտ և ուսանելի են հայ հին  
ու նոր կերպարվեստի այլազան դրսևորումները:



**ARTSVI BAKHCHINYAN, Ph.D.**

*Institute of History, NAS RA*

*Senior researcher*

*E-mail: artsvi1971@mail.ru*

## **ARMENIAN-JAPANESE RELATIONS IN FINE ART**

### **SUMMARY**

**Keywords:** Hokusai, Vardges Surenyants, Aslamazian sisters, Ara Haytayan, Taron Simonyan, Armenian-Japanese exhibitions.

This subject includes several sub-topics:

- a. Japanese themes and motifs in Armenian art,
- b. Japanese fine art works in Armenia,
- c. Armenian art exhibitions in Japan and Japanese art exhibitions in Armenia.

The first manifestation of Armenian-Japanese relations in fine art can be conventionally considered “The Great Wave of Kanagawa” by Katsushika Hokusai (1760-1849). In the picture depicting a sea scene, the outline of Mount Ararat can be seen among the foaming waves, noticed by both Armenians and non-Armenians.

For more than a century, Japan, its culture and people have been inspiring Armenian artists, who have expressed Japanese motifs in their paintings, sculptures, posters. Vardges Surenyants (1860-1921) was the first Armenian artist who referred to Japanese reality: his “Geisha: A Japanese Woman” was painted in 1900 – in time when Europe started to discover Japan and its art. Later Japanese inspirations, portraits and landscapes, can be found in arts of number of Armenian artists (Aslamazyan sisters, Gayane Khachatryan, Taron Simonyan, etc.). From the beginning to this day, the Japanese themes remain within the limits of exotica for the Armenian artist.

Japanese art is represented at the Far East section of the National Gallery of Armenia. Already in 1924, there were samples of Japanese embroidery in the newly created museum. The collection also includes Japanese craft samples, as well as 91 works by 19th century ukiyo-e color wood carving artist Utagawa Kunisada (1786-1864). Matenadaran Museum in Yerevan also possesses a Japanese handwritten picture book “Manga” from 1812.

Mutual recognition of Armenian and Japanese artists continues with exhibitions organized from time to time in capital cities of both countries. In particular, artist and curator Ara Haytayan organized a number of exhibitions of Japanese artists and photographers in Yerevan in 2006-2005. However, for objective reasons, Japanese art is much more represented in Armenia than Armenian art in Japan.